

ԹԱՄԱՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ԵՊՀ

ԺԷ. ԴԱՐԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՐ ՏՊԱԳԻՐ ԳՐՔԵՐԸ

ԺԷ. Դարի աշխարհաբար տպագիր գրքերն առանձնահատուկ ուսումնասիրման համար: Այս դարաշրջանը կարեւորվում է մեր լեզվի նոր փուլի սկզբնավորմամբ, որն իր հետ բերում է այնպիսի գրքերի տպագրում, որոնց լեզուն վաղ աշխարհաբարն է: ԺԷ. դարը կարեւոր փուլ է նաեւ հայ տպագրության պատմության մեջ առհասարակ. այս շրջանից սկսյալ՝ այն ստացավ անընդհատելի բնույթ: Մեր աշխատանքը նվիրված է ԺԷ. դարում տպագրված աշխարհաբար գրքերի՝ «Արիեսուր համարողութեան ամբողջ եւ կարարեալ» (Մարսել, 1675), «Պարգաքանութիւն հոգեւտուազ սաղմոսացն Դաւթի մարգարէին» (Վենետիկ, 1687), «Գանձ չափոյ, կշոոյ, թոյ եւ դրամից բոլոր աշխարհի» (Ամստերդամ, 1699) երկերի ուսումնասիրմանը, մասնավորապէս, թե որ տպարանում եւ ինչպիսի հանգամանքներում են լույս տեսել, ինչ կառուցվածք ունեն, բովանդակային ինչ նպատակ են հետապնդել, ովքեր են հեղինակները, ինչ բնույթ ունի աշխարհաբարն այդ գրքերում: Ճիշտ է, դրանք տպագրվել են հայկական տպարաններում, սակայն բուն Հայաստանից դուրս՝ Մարսելում, Վենետիկում, Ամստերդամում: Այս գրքերի լույսընծայումը բազում դժվարությունների, խոչընդոտների հաղթահարման արդյունք էր: Հոգվածում կփորձենք վերոհիշյալ երկերը եւ դրանց լեզուն ներկայացնել ԺԷ. դարի հայ տպագրության խորապատկերում:

Ոսկանյան տպարանը եւ «Արիեսուր համարողութեան ամբողջ եւ կարարեալ» գիրքը. Հայ տպագրության զարգացման եւ պատմության մեջ իր կարեւոր դերն է ունեցել Ոսկանյան տպարանը, որն այդպէս է կոչվել Ոսկան Երեւանցու (Ղլիճենցի) անունով: Նրա ծնողները երեւանցի էին: Գ. Լեւոնյանը նշում է, որ Ոսկանը եւ եղբայրը՝ Ավետիս Ղլիճենցը, մինչեւ վերջ էլ իրենց անվանում էին երեւանցի¹: Տպագրիչ, քերական, թարգմա-

¹ Գ. Լեւոնյան, Հայ գիրքը եւ տպագրության արվեստը, Երեւան, 2012, էջ 100:

նիչ, փրկիստփա, հասարակական գործիչ Ո. Երեւանցին եղել է Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի դպրոց-համալսարանի սաներից (հիմնել էր Խաչատուր Կեսարացին), իր ժամանակին համարվել էջմիածնի միաբաններից ամենախելացիներից մեկը: Լեոն բարձր է գնահատել Ո. Երեւանցու գործունեությունը՝ նշելով. «Նա առաջին հայ մարդն էր, որ կանոնավոր ու հարատեւ դրություն ստեղծեց տպարանի համար. նա առաջին հայ հրատարակիչն էր, որ ուներ համեմատաբար շատ լայն հայացք իր գործի վրա, որ գիրք էր տալիս ոչ միայն տիրացուին, այլեւ վաճառականին, հասարակ ընթերցողին»²: Ըստ Հ. Միրզոյանի՝ Ո. Երեւանցին հայ մշակութային գործիչների շարքում երջանիկ բացառություն է այն առումով, որ ոչ միայն գրել է ստուգապատում ինքնակենսագրություն, այլեւ անձամբ տպագրել այն³: Նշենք, որ Ոսկան Երեւանցին իր ինքնակենսագրությունը գետեղել է Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» երկի հրատարակության մեջ (1669 թ.): Ինքնակենսագրությունը տրվում է Մէ. գլխում, սակայն ոչ թե իր, այլ Առաքել Դավրիժեցու անունից՝ ներկայացվելով «Պատմութիւն կենաց Ոսկանայ վարդապետի Երեւանեցոյ տպագրողի գրոյս եւ այլոց» վերնագրով: Մեր կարծիքով՝ այդ ինքնակենսագրությունը մեծ արժեք ունի Ոսկան Երեւանցու գործունեության մասին ճիշտ պատկերացում կազմելու համար, քանի որ գրված է հենց նրա կողմից:

ժէ. դ. հայ գրքի պատմության մեջ նշանավոր էր Ոսկանյան տպարանի գործունեությունը Հոլանդիայում, Իտալիայում եւ Ֆրանսիայում: Հոլանդիայում տպարանի գործունեությունը սկզբնավորվեց Աստվածաշնչի տպագրությամբ: Ինչպես գիտենք, այս հարցում կարեւոր դերակատարում են ունեցել Մատթեոս Ծարեցին, Ավետիս Ղլիճենցը: Թեեւ Մատթեոս Ծարեցուն բախտ չի վիճակվում տեսնել տպարանի գործունեության արդյունքները, սակայն, անգամ հիվանդ լինելով, նա մտածում է տպարանի մասին՝ Ավետիս Ղլիճենցին առաջարկելով շարունակել իր գործը: Մատթեոս Ծարեցու մահից հետո, երբ տպարանը պարտքերի պատճառով պիտի բռնադրավիւր, նորջուղայեցի վաճառական Ավետիս Ղլիճենցը, որ Ամստերդամում էր գտնվում առեւտրական գործերով, վճարում է բոլոր պարտքերը, դառնում տպարանի սեփականատերն ու շարունակում աշխատանքները: Հայ գրքի պատմության մեջ Ավետիս Ղլիճենցը ներկայացվում է որպես վաճառական, սակայն, ըստ Հ. Միրզոյանի, եթե նա չլի-

² Լեո, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1986, էջ 240:

³ Հ. Միրզոյան, Ոսկան Երեւանցու ինքնակենսագրությունը, ԲԵՀ, «Հայագիտություն», 2014, թ. 142.1, էջ 43-53:

ներ, հազիվ թե Ոսկան Երեւանցին կարողանար հայ գրքի տպագրութեան գործում վիթխարի դերակատարում ունենալ: Հետեւաբար՝ Ավետիս Ղլիճենց Երեւանցին հայ գրքի պատմութեան մեջ պետք է ներկայացվի ոչ թե որպէս վաճառական, այլ որպէս վաճառական-տպագրիչ⁴:

Ավետիսը տպարանը կոչում է Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգիս գորավարի անվամբ: Ինչպէս նշում է Ռ. Իշխանյանը, Ուշի գյուղի Ս. Սարգիս վանքի հիշատակութիւնը պատահական չէր, քանի որ այդտեղ վանահայր էր նրա եղբայր Ոսկան Երեւանցին⁵, ով շուտով Ավետիս Ղլիճենցի կողմից հրավիրվում է Ամստերդամ՝ զբաղվելու հրատարակչական գործերով: Ոսկան Երեւանցին Ամստերդամ մեկնելուն պէս անցնում է գործի: 1668 թ. լույս է տեսնում Աստվածաշունչը, որը հայ գրքի պատմութեան մեջ հայտնի է «Ոսկանյան Աստվածաշունչ» անվամբ: 1669 թ. Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգիս անվան տպարանը տեղափոխվում է Իտալիայի Լիվոռնո քաղաք, որտեղ գործում է 1669-1670 թթ.: 1673-ից այն իր գործունեութիւնը շարունակում է Ֆրանսիայում՝ Մարսելում: 1674 թ. անբարենպաստ պայմանների, լարված իրավիճակի եւ առողջութեան քայքայման հետեւանքով Ոսկան Երեւանցին մահանում է: Ինքնակենսագրութեան մեջ նա գրում է. «...բայց զնեղութիւնս կրեաց եւ կրէ՝ ի սուտակասպասից՝ եւ ի բարձրայօնից իմաստակաց. յեկեղեցականաց եւ յաշխարհականաց. մերձակայից եւ հեռաւորաց. իսկ նա զչարչարանսն յանձին տարեալ ասէր. եթէ տակաւին մարդկան հաճոյ լինիմ, ապա Քրիստոսի ծառայ ոչ եմ»⁶:

Ոսկան Երեւանցու մահվան հանգամանքներն անտարբեր չեն թողել ուսումնասիրողներին, որոնք ցավով են անդրադառնում հայ տպագրութեան պատմութեան նշանավոր գործչի կորստին: «Սիոն»-ում նրա մահը ներկայացվում է այսպէս. «...Ոսկան, իր տպելիք ժամագրքին առնչութեամբ յարուցուած բիւրաւոր դժուարութիւններուն եւ մատնութիւններուն պատճառած վիշտերէն յոգնաբեկ, կը վախճանի 1674-ին, բոլորովին անտէր ու անպաշտպան ձգելով իր քեռորդին Սողոմոնը եւ տպարանին ամենէն հաւատարիմ հերոսներէն մին՝ Նասիպ Գրիգորեանը: Գերեզմանն իսկ անյայտ է այժմ»⁷: Իսկ Լեոն գրում է, որ Ոսկան Երեւանցին հայրե-

⁴ Հ. Միրզոյան, Ավետիս Երեւանցի. վաճառական, թէ տպագրիչ, ԲԵՀ, «Հայագիտություն», 2015, 3 (18), էջ 17:

⁵ Ռ. Իշխանյան, Հայ գիրքը 1512-1920, Երեւան, 1981, էջ 59:

⁶ «Գիրք պատմութեանց. շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դարեժացոյ», Ամստերդամ, 1699, էջ 638:

⁷ Ա. Գալայճեան, Ոսկան Երեւանցի հայ տպագրութեան մեծ երախտաւորը, «Սիոն», 1966, 2-3, էջ 103:

նի տգիտությունն եւ խավարի, իր զարմանալի եռանդի, ընտանի մատնիչի զոհ էր. նա ոչ մի կողմից աջակցություն չէր ստանում⁸: Այսպիսով՝ նման հանգամանքներում մեծ գործչի մահը ցավալի իրողություն էր ոչ միայն հայ տպագրության, այլեւ հայ մշակույթի համար առհասարակ: Ոսկան Երեւանցին իր անփոխարինելի տեղն ունի հայ գրատպության պատմության մեջ եւ թողել է թարգմանական, քերականական-մեկնողական արժեքավոր ժառանգություն⁹:

Մարսելում Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի անվան տպարանի գործունեությունը շարունակվում է մինչեւ 1686 թ.: Այն վերոհիշյալ երեք քաղաքներում 26 տարվա ընթացքում լույս է ընծայում շուրջ 40 անուն հայերեն գիրք:

«Արհեստը համարողութեան ամբողջ եւ կայարեալ». Ահա խոչընդոտներով լի ճանապարհ անցած Ոսկանյան տպարանի մարսելյան գործունեության ընթացքում 1675 թ. լույս տեսավ աշխարհաբար առաջին գիրքը՝ «Արհեստ համարողութեան ամբողջ եւ կատարեալ»-ը: Այն նաեւ հայերեն տպագիր մամբմատիկական առաջին գիրքն է, որում ներկայացվում են թվաբանական գործողությունները, տարբեր հաշվարկներ կատարելու եղանակներն ու ձևերը: Մեր աշխատանքներից մեկում անդրադարձել ենք գրքի մամբմատիկական եզրաբանական համակարգին, քննել երկուս գործածվող մամբմատիկական տարբեր եզրերը, դասակարգել դրանք¹⁰: Աշխարհաբար տպագիր առաջին գրքի մասին տեղեկություն է հաղորդում Գ. Զարբհանալյանը՝ ներկայացնելով դրա տիտղոսաթերթը¹¹, իսկ Արսեն Ղազիկյանը բնութագրում է այն որպես փոքրագիր եւ մանրագիր գրքույկ՝ ժամանակի աշխարհաբարով¹²:

Գրքի անվանաթերթը հետեւյալն է. «ԱՐՀԵՍՏ ՀԱՄԱՐՈՂՈՒԹԵԱՆ: ԱՄԲՈՂՋ ԵՒ ԿԱՏԱՐԵԱԼ: Թարգմանեցեալ ի պէսու հայկազունեաց եւ մանաս-

⁸ Լեո, Երկերի ժողովածու, էջ 241:

⁹ Հ. Մխիթարյան, Ոսկան Երեւանցին իբրեւ քերականագետ, «Էջմիածին», 1966, ԺԱ.-ԺԲ., էջ 210-217. Ն. Բ. Պողոսյան, Ոսկան Երեւանցու ձեռագիր եւ տպագիր թարգմանական երկերի համեմատական վերլուծության փորձ, ԲԵՀ, «Հայագիտություն», 2012, թ. 138.1, էջ 46-58. Ն. Պողոսյան, Ոսկան Երեւանցու քերականական ժառանգությունը, ԲԵՀ, «Հայագիտություն», 2014, 1թ. 42.1, էջ 54-67:

¹⁰ Թ. Պողոսյան, Մաթեմատիկական տերմինաբանական համակարգը «Արհեստ համարողութեան» գրքում, «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական տեղեկագիր», «Հումանիտար գիտություններ», 2014, 2-3 (21-22), էջ 141-152:

¹¹ Գ. Զարբհանալեան, Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883, էջ 70:

¹² Ա. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտություն եւ հանրագիտարան հայ կյանքի, հ. 1, Երեւան, 2013, էջ 248:

ւանդ վաճառականաց: Եւ տպագրեցեալ ի տպարանի տրքոյ Էջմիածնի եւ տրքոյն Սարգսի զօրավարին: Ի հայրապետութեան տ[եառ]ն Յակօբայ ամենից հայոց Կաթողիկոսի եւ ի միապետութեան Լուսովիկոսի չորեքսուսաներորդի արքային Կալիկացոց: Ի ՄԱՐԶԻԼԵԱՅ. Յամի ներ մարդեղութեան Տ[եառ]ն 1675. Օգոստոսի ամսոյ 25: Ի. Յ. Հ. Բ. Տ. Պ.»¹³: Հասկանալի է դառնում, որ գիրքը թարգմանություն է, սակայն երկուսն էլ թարգմանություն, ինչպես նաև բնագրի լեզվի վերաբերյալ տեղեկություններ չեն տրվում (ո՞վ է թարգմանիչը, ո՞ր լեզվից է թարգմանված): Մաթեմատիկոս Գ. Պետրոսյանը Լենինգրադի Սալտիկով Շչեգրինի անվան պետական գրադարանի հնատիպ գրականություն ֆոնդում հայտնաբերել է 1650 թ. լատիներեն հրատարակված այն գիրքը, որն այսօր համարվում է հայ հեղինակի թարգմանության աղբյուրը՝ գերմանացի մաթեմատիկոս Քրիստափոր Կլավիուսի «Գործնական թվարանության համառոտ շարադրանք»-ը: Բնօրինակի եւ թարգմանության վերնագրերը չեն համընկնում, սակայն դրանց բնագրերի, թվաբանական խնդիրների ու վարժությունների համեմատությունը հաստատել է, որ թարգմանության հիմքում ընկած է Քրիստափոր Կլավիուսի աշխատությունը (հրատարակվել է ինչպես հեղինակի կենդանության օրոք, այնպես եւ նրա մահվանից հետո¹⁴):

«Արհեստ համարողութեան ամբողջ եւ կատարեալ»-ը կազմված է հետևյալ բաժիններից՝ «Առաջաբանութիւն գրգոյս», որին հաջորդում է «Սկզբունք համարողականի արհեստի աշխարհականօրէն շարագրեցեալք» մասը՝ բաղկացած 5 գլուխներից՝ «Յաղագս թէ ինչ է համարողութիւնն եւ թէ քանի գիր ունի», «Յաղագս թէ ինչ է սաղ թվի բարդելն», «Յաղագս թէ ինչ է սաղ թվի հանելն», «Յաղագս թէ ինչ է սաղ թվի բազմացնելն», «Յաղագս թէ ինչ է սաղ թվի բաժանելն»: Հաջորդում է մի նոր մաս, որի համար ընդհանուր վերնագիր նշված չէ. այն բաղկացած է 3 գլուխներից: Առաջինն է «Յաղագս թէ ինչ է կտրատած թիվն», որի ենթագլուխներն են (գրքում նշված չէ «ենթագլուխ» բառը, միայն անվանումներն են տրված)՝ «Կտրատած թիվն ինչպէս պիտի հանած», «Կտրատած թիվն ինչպէս պիտի բազմացուցած», «Կտրատած թիվն ինչպէս պիտի բաժանած»: Երկրորդ գլուխը կոչվում է «Յաղագս թէ ինչ է երեքի կանոնն եւ թէ ինչ է ընկերութիւնն», ունի համապատասխան ենթագլուխ՝ «Յաղագս թէ ինչ է ընկերու-

¹³ «Արհեստ համարողութեան ամբողջ եւ կատարեալ», Մարսել, 1675, անվանաթերթ (այսուհետ՝ մեջբերումները բնագրային ուղղագրությամբ կկատարվեն այս աղբյուրից):

¹⁴ Գ. Պետրոսյան, Հայերեն առաջին տպագիր մաթեմատիկական գիրքը, «Բնագիտության եւ տեխնիկայի պատմությունից», 1973, 5, էջ 37-40. «Սովետական Հայաստան», 1969, 170:

թիւնն», երրորդ գլուխը վերնագրված է «Յաղագս առեւտրից վաճառականաց», որին հաջորդում է «Վախճան» անվանումը կրող հիշատակարանը:

Գրքի առաջաբանն ու հիշատակարանը գրված են գրաբար, իսկ երկի լեզուն Ռ. Իշխանյանը բնորոշում է որպես այն ժամանակի աշխարհիկ կամ աշխարհաբար հայերեն, որ հասկանալի է եղել ազուլեցի, կեսարացի, ջուղայեցի, ամեն մի հայ վաճառականի¹⁵:

Առաջաբանում, որը կոչվում է «Առաջաբանութիւն գրգոյս», կարող ենք տեսնել գրքի նպատակը. «Տեսանելով զհարկատրութիւն մերազնեայց վաճառականաց վասն կարարելապէս ո՛չ գիրելոյ զարհեստն համարողութեան, վայելուչ վարկաք զգիրգս զայս թարքմանել ի մերս բարբառ. որպէսզի սովա վարժեցեալք կարիցեն դիտապէս պարապիլ ի գործս իւրեանց թարց դեգերման մտաց»: Գրքի նպատակի մասին նշված է նաեւ հիշատակարանում՝ «Վախճան»-ում. «...ի վայելումն հանուրց հայկազունեաց վաճառականաց...» (էջ 145): Քանի որ գիրքը նախատեսված էր հայ վաճառականների համար, այն ունեւ համապատասխան չափսեր (11x6.8), որպեսզի օգտատերերը կարողանային պահել իրենց մոտ շրջագայութիւնների ժամանակ: Հայ վաճառականների համար նախատեսված լինելը ենթադրում էր նաեւ հասկանալի լեզվով հրատարակութիւն, որպեսզի ընթերցողներն ընկալէին եւ կարողանային կիրառել գրքում բացատրվող թվաբանական գործողութիւնները, հաշվումներ կատարելու եղանակները. «Եւ մանաւանդ զի աշխարհականաւ ոճիւ է շարագրեցեալ առ ի բառնալ զպարճառս ծովից եւ պարաւաքանից. որք եթէ մի անգամ սիրով եւ ուշադրութեամբ ընթեռնուցուն զսա, զքնաս ոճութիւնս համարողութեան գերազանցեցեն» («Առաջաբանութիւն գրգոյս»): Այսպիսով՝ գիրքը շարադրված է աշխարհական ոճով, որպեսզի բոլորին հասկանալի լինի:

Ընդունված է այն կարծիքը, թե «Արհեստ համարողութեան ամբողջ եւ կատարեալ»-ը 1675 թ. Մարտելի հայկական տպարանում լույս տեսած «Գիրգ վայելուչ»-ի 4-րդ մասը պիտի լինէր: Այս գիրքը նախատեսված է եղել «...ի պէրս եւ ի հրճումնս հայկազունեաց եւ մանաւանդ վաճառականաց»¹⁶: Երկի անվանաթերթում թվարկվել են չորս մասեր, սակայն չորրորդ՝ «Սկզբունք համարողականի արհեստի» մասը չկա: Ըստ Ռ. Իշխանյանի՝ «Մարտելի հայ տպագրիչները նախապէս որոշել են վաճառականների համար նախատեսված փոքրադիր գրքույկը հրատարակել այն բովանդակութեամբ, որը նշված է «Գիրգ վայելուչ»-ի անվանաթերթին, նախատեսված

¹⁵ Ռ. Իշխանյան, Հայ հնատիպ գիրքը, Երեւան, 1968, էջ 30:

¹⁶ «Գիրգ վայելուչ», Մարտել, 1675, էջ 144:

4-րդ մասը եղել է հենց աշխարհաբար, մեզ արդեն ծանոթ «Արհեստ համարողութեան»-ը»¹⁷: Սակայն 4-րդ մասը չի հավելվել, քանի որ գիրքը շատ ընդարձակ եւ հաստ կլիներ. գուցե նաեւ որոշվել է համարողութեան արհեստի մասին նյութն առանձին լույս ընծայել:

Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Գ. Զարբհանալյանն առաջինն է փորձել վերծանել «Արհեստ համարողութեան ամբողջ եւ կատարեալ»-ի տիտղոսաթերթում գրված հապավումը՝ Ի. Յ. Հ. Բ. Տ. Պ.: Նա Յ-ին վերագրել է Յակովբ, Հ-ին՝ Հովով, Իսկ Բ-ին՝ Բիզանդեան: Ըստ Գ. Զարբհանալյանի՝ գրքի թարգմանիչը Հովհաննես Հովով Կոստանդնուպոլսեցին է: Սակայն ուսումնասիրողը «Յակովբ Հովով Բիզանդեան» անվան կողքին հարցական նշան է դրել. սա վկայում է, որ այս կարծիքը կասկածների տեղիք է տալիս՝ «(Յակովբ Հովով Բիզանդեան ?)»¹⁸: Ա. Ղազիկյանը կասկածանքով է ընդունում Գ. Զարբհանալյանի առաջադրած վարկածը՝ պահպանելով նույն հարցական նշանը¹⁹: Սակայն տարիներ անց Ա. Ալպոյաճյանը հաստատում է, որ այս աշխատության թարգմանիչը Հովհաննես Հովովն է՝ լատինաբան դպրոցի նշանավոր ներկայացուցիչը²⁰: Իսկ Հ. Անասյանը Հովհաննես Հովովին համարում է գրքի վերախմբագրողը՝ նշելով, որ «Արհեստ համարողութեան» երկի հիմքում Կոստանդին Զուղայեցու «Դուռն համարողութեան արհեստի» տեսական հատորն է՝ որոշ փոփոխությունների ենթարկված, գուցե որոշ չափով վերախմբագրված²¹: Հ. Դավթյանն անհավանական է համարում Հովհաննես Հովովի՝ այս գրքի թարգմանիչ լինելու հանգամանքը: Նա համեմատում է «Արհեստ համարողութեան» եւ «Պարզաբանութիւն հոգեբուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին» երկերը, քանի որ վերջինիս հեղինակը Հովհաննես Հովովն է, եւ նշում. «Նմանություններ շատ կան: Դա զարմանալի է, որովհետեւ լինելով միեւնույն ժամանակի լեզու, թեկուզ տարբեր հեղինակների էլ պատկանելիս լինեին, պետք է ընդհանրություններ ունենային: Բայց այդ գրքերի լեզուների մեջ կան եւ զգալի տարբերություններ: Առանձին բառերի, ոճերի տարբերությունները հիմքեր են տալիս հաստատելու, որ միեւնույն մարդու գործ չեն»²²:

¹⁷ Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, հ. 1, Երևան, 2012, էջ 508:

¹⁸ Գ. Զարբհանալեան, նշվ. աշխ., էջ 70:

¹⁹ Ա. Ղազիկյան, նշվ. աշխ., էջ 248:

²⁰ Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն հայ դպրոցի, հ. Ա., Կահիրէ, 1946, էջ 407:

²¹ Յ. Անասեան, Հայկական մատենագիտություն, հ. Բ., Երևան, 1976, էջ 874:

²² Հ. Դավթյան, Աշխարհաբար գիրքը հայ տպագրության սկզբից մինչև 1850 թվականը, Երևան, 1964, էջ 11:

Ռ. Իշխանյանի բերած փաստարկները մերժում են Հովհաննես Հոլովին գրքի թարգմանիչը համարելու անվերապահությունը, սակայն բոլորովին չեն ժխտում նրա մասնակցությունը հնարավորությունը: Գրքի թարգմանիչ լինելու համար, ըստ Ռ. Իշխանյանի, հավանական են համարվում մի քանի հեղինակային տարբերակներ, օրինակ՝ Ոսկան Երեւանցին, ոսկանյան տպարանի գրաշար Մատթեոս Հովհաննիսյանը, Ոսկանի քեռորդի եւ տպարանի գրաշարապետ Սողոմոն Լեւոնյանը, Ոսկան Երեւանցու գործընկեր Թադեոս Համագասպյանը: Սակայն նրանցից որեւէ մեկին հաստատապես երկի թարգմանիչ համարելու հիմք չկա²³:

Վերջին շրջանում «Արհեստ համարողութեան»-ը նվիրված հետաքրքիր ուսումնասիրություն է կատարել Ասատուր Փաշայանը («Արհեստ համարողութեան»-ը հայ հնատիպ գրքի պատմութեան հոլովոյթում», 2011, տեղադրված է հայ մատենագրության թվանշային գրադարանի էլեկտրոնային էջում): Քննելով գրքի հեղինակի վերաբերյալ որոշ կարծիքներ՝ նշում է. «Մեր կարծիքով «Արհեստ համարողութեան»-ի հեղինակը Կոստանդ Ջուղայեցին է: Նա, ինչպէս իրաւացիօրէն նշել է Յ. Անասեանը, սկզբնապէս իր գիրքը շարադրել է Նոր Ջուղայի բարբառով, իսկ յետոյ այն ենթարկել է որոշ սրբագրութիւնների, որպէսզի հասկանալի լինի նաեւ ոչ Ջուղայեցի վաճառականներին: Կարծում ենք՝ Կոստանդ Ջուղայեցին համեստօրէն «Արհեստ համարողութեան»-ի տիտղոսաթերթում չի գրել իր անունը»:

Ինչպէս նկատում ենք, աշխարհաբար տպագիր առաջին գրքի թարգմանչի վերաբերյալ առայժմ ձեւավորված միասնական կարծիք չկա: Տարբեր ուսումնասիրողներ մեկնաբանել են իրենց մոտեցումները, սակայն հայերենագիտության մեջ երկի թարգմանչի հարցը մնացել է անհստակ: Մեր կարծիքով դժվար է միանշանակ արձանագրել, թե ով է եղել գրքի թարգմանիչը, սակայն փաստ է, որ Հովհաննես Հոլովի՝ թարգմանիչ լինելու վարկածը լայն տարածում է գտել հայերենագիտության մեջ:

Նահապետ Ագուլեցու տպարանը եւ «Պարզաբանութիւն հոգնուսագ սաղմնասցն Դատի մարգարէին» գիրքը. Ժէ. դարի երկրորդ կեսին հայ տպագրութեամբ զբաղվել են նաեւ այլազգիները, մասնավորապես՝ իտալացի տպարանատերերը (Ջիովանի Բովիս, Ջիովանի Մորետի եւ այլք): Հիշարժան է հատկապես Ջիովանի Մորետիի համագործակցությունը հայ վաճառականներ Նահապետ Ագուլեցու եւ Գասպար Սահրաբյանի հետ՝ Վենետիկում: 1687 թ. Նահապետ Ագուլեցու տանը գտնվող տպարանում լույս է

²³Ռ. Իշխանյան, Նոր գրական հայերենը XVII-XVIII դարերում, Երեւան, 1979, էջ 98-100:

տեսնում աշխարհաբար երկրորդ գիրքը՝ «Պարզաբանութիւն հոգեհոռագ սաղմոսացն Դաւթի մարգարէին»: Գ. Լեւոնյանն այս մասին նշում է, որ մեկ այլ վաճառական՝ Ագուլեցի խոջա Նահապետ Գուլնազարը, սարքավորում է մի տպարան, եւ 1687 թվին լույս է տեսնում «Պարզաբանութիւն սաղմոսաց»-ը՝ մի հոյակապ եւ բազմածախ գիրք: Ուսումնասիրողը հավելում է, որ վերջինս գրքերի հարատարակությունից նյութական չահույթ չի ակնկալել, սակայն գուցե ունեցել է «բարեգործ» կամ «մեկենաս» կոչվելու փառասիրութիւն²⁴: Ինչ վերաբերում է Զ. Մորետիի եւ Ն. Ագուլեցու համագործակցությանը, ապա, ըստ Ռ. Իշխանյանի, այս մեծածավալ գիրքը գուտ հայկական հրատարակութիւն է, եւ Զ. Մորետին կողմնակի մասնակցութիւն է ունեցել դրա տպագրութիւնը²⁵:

ԺԵ. դարի կեսերին հայ ժողովուրդը առանձնահատուկ հետաքրքրութիւն էր ցուցաբերում սաղմոսների հանդեպ, որը Հ. Միրզոյանը համարում է հայերի գիտակցութիւն մեջ տեղի ունեցող ազատագրական խմորումների հետեւանք²⁶: Այս ժամանակաշրջանում Սաղմոսացը շատերի համար առձեռն գիրք էր. այն օգտագործում էին ոչ միայն եկեղեցու սպասավորները, այլեւ մյուսները (նաեւ որպէս մայրենիի դասագիրք, ընթերցանութիւն գիրք): Նահապետ Ագուլեցին ցանկացել է, որ երկը հասկանալի լինի ընթերցողներին, գրավիչ, հետաքրքիր, ինչը կարելի է ենթադրել նաեւ գրքում տեղ գտած նկարներից: Երկի սկզբում տեղադրված է Նահապետ Գուլնազար Ագուլեցու խոշոր նկարը, որից կարող ենք նաեւ պատկերացում կազմել ԺԵ. դ. հայ խոջաների հագուստի մասին:

«Պարզաբանութիւն հոգեհոռագ սաղմոսացն Դաւթի մարգարէին» գրքի անվանաթերթն այսպիսին է. «ՊԱՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀՈԳԵՆՈՒԱԳ ՍԱԳՄՈՍԱՑՆ ԴԱԹԻ ՄԱՐԳԱՐԷԻՆ: Ժողովեցեալ ի զանազանից մարենից վարդապետաց Եկեղեցոյ, եւ թարգմանեցեալ ի հայրապետութեան Սրբոյն Աթոռոյն Էջմիածնի տեառն Եղիազարու Սրբազան Կաթողիկոսին. Ի նուսար Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդինուպօլսեցոյ ի փառս մեծագոյնս Աստուծոյ): Եւ տպագրեցեալ արդեամբք եւ գոյիք Ագուլեցի խօճայ Գուլնազարի որդի

²⁴ Գ. Լեւոնյան, նշվ. աշխ., էջ 94-95:

²⁵ Ռ. Իշխանյան, Հայ գիրքը 1512-1920 թթ., էջ 53:

²⁶ Հ. Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երևան, 1983, էջ 122:

խօսայ Նահապետին ի սեփականի րան իւրում: Ի թուականութեան մերում ՌՃԼԵ., ի Վէնէտիկ քաղաքի»²⁷:

Գիրքն ունի հետեւյալ կառուցվածքը. սկսվում է բանաստեղծությամբ, որին հաջորդում են առաջաբանը՝ «Առաջաբանութիւն գրգոյս», ապա՝ «Խրատ առ ընթերցողս» մասը, որից հետո սկսվում է սաղմոսների մեկնությունը՝ «Պարգաբանութիւն Սաղմոսացն Դաւթի մարգարէին», նաեւ «Աղօթք վասն իւրաքանչիւրոց անձանց հաւատացելոց ի Քրիստոս: Զոր արարեալ է տեառն Ներսէսի հայոց կաթողիկոսի» հատվածը, որին հաջորդում են Նահապետ Ագուլեցու բանաստեղծությունը եւ վերջաբանը («վերջաբան» կամ «հիշարարական» բառերը նշված չեն):

Երկի սկզբում տեղ գտած բանաստեղծության միջոցով, որը, ի դեպ, Գ. Լեւոնյանն անվանում է տաղաչափական հիշատակարան, պատկերացում ենք կազմում գրքին վերաբերող տարբեր հարցերի մասին: Այստեղ տեղեկություն է տրվում նաեւ Նահապետ Գուլնազարի մասին. «...Ես Նահապետ նուսար հոգի. // որ եմ որդի Գուլնազարի. // գեղջիւ բընիկ ագուլեցի. // զորանաւորս շարադրեցի...» (էջ 3):

Երկի ստեղծման նպատակի մասին եւս կարգում ենք այդ բանաստեղծության մեջ. «...ի փառս փրկչին մեր Յիսուսի. // եւ ի յօգուտ հայոց ազգի. // Ի իշարակ անքակելի. // եւ ի սիփիանս ընթերցողի...» (էջ 3):

Աշխատանքը կատարվել է «ստամպուլցի վարդապետ Յոհաննիսի» օգնությամբ, ում Նահապետ Ագուլեցին աղաչել է ձեռնարկել այդ գործը: Հովհաննես Հոլովն սկսել է. «եւ աշխարմամբ իւրոյ ջանի. // հասոյց ի վերջ զիղձն իմ բարի...» (էջ 3):

Բանաստեղծությունից տեղեկանում ենք նաեւ, որ Ագուլեցին շատ դրամ է վատնել նեղություն ժամանակ, մինչեւ երկը տպագրել ու ավարտին է հասցրել, իսկ այն. «...սարգ է՝ եւ հեշտալի. // եւ դիւրապէս հասկանալի. // իւրաքանչիւր ցանկացողի. // լուծէ զկապ տարակուսի...» (էջ 3):

Հաջորդում է «Առաջաբանութիւն գրգոյս»-ը, որը գրել է Հովհաննես Հոլովը: Այստեղ նշվում է, որ Գուլնազարի որդի խոջա Նահապետը վաղուց ցանկացել է ունենալ Դավիթ մարգարեի սաղմոսների մեկնությունը: Նա չէր կարողացել գտնել պարզախոս հեղինակ, ուխտել էր այն շարադրել տալ իր ցանկության իրականացման համար: Թախանձանքով խնդրել է պարզաբանել. «Բայց ո՛չ խրթին շարադրութեամբ, այլ աշխարհա-

²⁷ «Պարգաբանութիւն հոգնուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին», Վենետիկ, 1687, անվանաթերթ (այսուհետ՝ մեջբերումները բնագրային ուղղագրությամբ կրեւրվեն այս աղբյուրից, դրանց կողքին կնշվեն էջերը):

կան լեզուաւ. ըստ որում տեսնալ էր առ իրաւացիս. զի ամենեքեան միահաղոյն դիրապէս հասկանալով, վայելիցեն զնոյն» (էջ 5): Այսպիսով՝ մեկնութիւնը պետք է իրականացվեր «աշխարհական» եւ «հասկանալի» լեզվով:

«Խրատ առ ընթերցողս» փոքրիկ բաժնում Հովհաննես Հոյովը բացատրում է, թե ինչու է մեկնութիւնն «աշխարհորէն» չարադրել. «Բայց նախ գիտելի է, զի զմեկնութիւնս զայս այնու դիրաւորութեամբ շարադրեցաք մեք աշխարհորէն, զի կարիցեն աշխարհականք ամենեքեան դիրապէս իմանալ զոյն. քանզի եկեղեցականք ունելով զբաւական կրթութիւն եւ զուսումն, յարածամ ճաշակեն զքաղցրութիւնս սրբազանից գրոց. իսկ աշխարհականք, որք պարապին ի զբաղմունս եւ ի հոգս աշխարհի, ամենեւին մասն անմխիթարք ի յայսպիսեաց շնորհաց» (էջ 8): Ըստ Ռ. Իշխանյանի՝ սա աշխարհաբարի հրապարակային առաջին պաշտպանութիւնն էր՝ նույն հիմնավորումով (գրաբարը ժողովրդին անհասկանալի է, աշխարհաբարը՝ հասկանալի), որ առաջ էին քաշում ԺԺ. դարի մի շարք հայ հեղինակներ²⁸: Հովհաննես Հոյովը հավելում է, որ չարհամարհեն իրեն՝ իբրեւ հայոց լեզվին անտեղյակ մեկի, քանի որ ինքն այդպես է վարվել ոչ թե եկեղեցականների համար, այլ «վասն օգրի եւ շահաւտութեան հասարակաց ժողովրդոց»:

Գրքի վերջում տեղ գտած եւ Նահապետ Ագուլեցու անունից գրված բանաստեղծութիւնն ավարտվում է այսպես. «Որք հանդիպիք եւ զիս յիշեալ, // յաղօթս ան սուրբ եւ մաքրեալ, // Յոհաննէս վարդապետի ինդրեալ // եւ զկամս իմոյ ի տեղ կարարեալ» (էջ 838):

Երկի էջերը երկու մասից են կազմված. առաջին մասում տրվում է գրաբար սաղմոսը, երկրորդում՝ տվյալ սաղմոսին համապատասխան աշխարհաբար մեկնութիւնը: Մեծ թվով պարզաբանութիւններ սկսվում են «այսինքն» բառով: Ստորեւ բերենք սաղմոսի եւ դրա մեկնութեան օրինակ. սաղմոս՝ «Երանի ամենեցուն ոյք յուսացեալք են ի տէր», պարզաբանութիւն՝ «Այսինքն, բայց երանի նոցա որ այս աշխարհումն մարդկային օգնութեան չեն ապահինիր. այլ զիրեանց յոյսն դրեր են յԱստուած. զերէ այն ժամանակն արժանի կուլինին փառաց եւ պսակաց» (էջ 20):

«Պարզաբանութիւն հոգեհուազ սաղմոսացն Դաւթի մարգարէին» երկը սաղմոսների մեկնաբանութեան մի հրաշալի օրինակ է, որը, մեր կարծիքով, պետք է արժանի տեղ ունենա ոչ միայն հայոց լեզվի պատմութեան, հայ գրատպութեան, այլ նաեւ կրօնագիտութեան մեջ: Ըստ Գ. Լեւոնյանի՝ գրքի հրատարակութեան ծախսերն այնպես են ազդել Նահապետ Ագու-

²⁸ Ռ. Իշխանյան, Հայ գիրքը 1512-1920 թթ., էջ 55:

լեցու վրա, որ նա այլեւս գիրք չի հրատարակել²⁹: Մահացել է երկի լույս ընծայումից 7 տարի անց՝ 1694 թ.:

Վանանդեցիների տպարանը եւ «Գանձ չափոյ, կշոյ, թոյ եւ դրամից բոլոր աշխարհի» գիրքը. Հայ գրատպութեան պատմութեան մեջ իր կարեւոր դերն է ունեցել նաեւ Վանանդեցիների տպարանն Ամստերդամում: Տպարանի հիմնադիրը Մատթեոս Վանանդեցին էր: Երբ 1683 թ. ավարտվում է Ոսկանյան տպարանի մարսելյան գործունեությունը, տպարանի խումբը բաժանվում է, եւ ահա այս խմբից Մատթեոս Վանանդեցին մեկնում է Ամստերդամ, որոշում այստեղ զբաղվել սիրելի գործով: Դժվարություններ հաղթահարելով՝ նրան հաջողվում է լույս ընծայել որոշ գրքեր, սակայն 1688 թ. վերադառնում է Հայրենիք: Ձգտելով լուծել տպագրութեան հետագա զարգացման խնդիրը՝ նա դիմում է իր ընկերոջը եւ քեռորդուն՝ Թովմաս Նուրիջանյանին, որը համաձայնում է թողնել առաջնորդական պաշտոնը, եղբորորդիներ Ղուկասի եւ Միքայելի հետ մեկնում է Ամստերդամ եւ 1694-ից զբաղվում տպարանի աշխատանքներով: Թովմաս Վանանդեցին տպարանի տնօրենն էր, Մատթեոս Վանանդեցին՝ գրաշարապետը, իսկ Ղուկաս եւ Միքայել Վանանդեցիները կատարում էին խմբագրական, սրբագրական աշխատանքներ: Վանանդեցիների մասին տարբեր տեղեկություններ են հաղորդում նաեւ նրանց հրատարակած գրքերի առաջաբաններն ու հիշատակարանները, օրինակ՝ «Ազգաբանութիւն տոհմին յաբեթեան» գրքի հիշատակարանում Թովմաս (Թօմաս) վարդապետը Մատթեոս Վանանդեցու մասին գրում է. «...զկարարեալ հմուտն յարունսր տպագրութեան...»³⁰, իսկ Ղուկաս Վանանդեցու մասին՝ «...եւ զեղբոր որդի իմ, զՂուկաս ֆիլիսոֆաւ, որ է՝ վարժ զանազան լեզուաց»³¹:

Տպարանի գործունեությունը ընթացքում լույս տեսան տարբեր աշխատություններ (հայերեն տպագիր առաջին քարտեզը՝ «Համատարած աշխարհացոյց»-ը (1695 թ.), Նոր Կտակարան, Ժամագիրք եւն): Այս տպարանում են հրատարակվել Ղուկաս Վանանդեցու տարբեր երկերը, այդ թվում նաեւ՝ «Գանձ չափոյ, կշոյ, թւոյ եւ դրամից բոլոր աշխարհի»-ն (1699 թ.), որը աշխարհաբար տպագիր երրորդ գիրքն է: Հարկ է նշել, որ Ղուկաս Վանանդեցին զբաղվել է նաեւ տպարանի ղեկավարությամբ. Թովմաս Վանանդեցու մահից հետո (1708 թ.) ինը տարի տպարանը շարունակել է աշխատել նրա տնօրինությամբ: 1717 թ. պարտատերերը

²⁹ Գ. Լեոնյան, նշվ. աշխ., էջ 97:

³⁰ «Ազգաբանութիւն տոհմին յաբեթեան», Ամստերդամ, 1695, էջ 487:

³¹ Անդ:

բռնագրավում են տպարանը, որից հետո այն դադարում է գործել: Ըստ Ռ. Իշխանյանի՝ Վանանդեցիների հրատարակությունները տպագրական արվեստի տեսակետից մի քայլ առաջ էին ոսկանյան հրատարակությունների համեմատ. «Այսօր անգամ նրանց նուրբ ու գեղեցիկ տիպը, առաջնակարգ սրբագրությունը հիացմունք են պատճառում»³²:

«Գանձ չափոյ, կշոոյ, թոյ եւ դրամից բոլոր աշխարհի»։ Սա աշխարհաբար տպագիր երրորդ գիրքն է, որը լույս է տեսել 1699 թ. Ամստերդամում՝ Վանանդեցիների տպարանում: Գրքի վերնագրի վերաբերյալ նկատել ենք հետեւյալը. Գ. Զարբհանալյանն իր մատենագիտության մեջ այն նշում է. «Գանձ. «Չափոց, կշոոց, թոոց եւ դրամից բոլոր աշխարհի (ընդգծումները՝ Թ. Պ.): Որ է գիտութիւն ամենայն տեսակ կշոոց, չափոց եւ դրամից, որով բոլոր աշխարհի վաճառականութիւնն վարի»»³³: Ապա տրվում են տիտղոսաթերթի մյուս տվյալները: Գ. Լեւոնյանը եւս գիրքը հիշատակում է «Գանձ չափոց, կշոոց, թոոց եւ դրամից բոլոր աշխարհի» անվամբ³⁴: Սակայն «Հայ գիրքը 1512-1800 թթ.» աշխատության մեջ տրվում է «Գանձ չափոյ, կշոոյ, թոոյ եւ դրամից բոլոր աշխարհի» անվանումը³⁵, որը կիրառվում է նաեւ հրատարակիչ վանանդեցիներին նվիրված «Նոր նիւթեր եւ դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցոց մասին» գրքում³⁶: Ռ. Իշխանյանն իր աշխատություններում երկը հիշատակում է «Գանձ չափոյ, կշոոյ, թոյ եւ դրամից բոլոր աշխարհի» վերնագրով: Հայ հնատիպ գրքերին նվիրված կայքում (*Armenian Rare Books 1512-1800*) մեկնաբանվում է գրքի անվանաթերթը, տեսնում ենք անվանումը, որին համակարծիք ենք՝ «ԳԱՆԶ ԶԱՓՈՅ՝ ԿՇՈՒՈՅ՝ ԹԸ/ԻՈՅ՝ ԵՒ ԴՐԱՄԻՑ/ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՐՀԻ»:

Ինչպէս նկատում ենք, առկա են որոշ տարբերություններ: Մենք գործածում ենք վերը նշված «ԳԱՆԶ ԶԱՓՈՅ՝ ԿՇՈՒՈՅ՝ ԹԸ/ԻՈՅ՝ ԵՒ ԴՐԱՄԻՑ/ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՐՀԻ» անվանումը, որի բաղադրիչների փոքրատառ գրության, ԹԸ/ԻՈՅ բաղադրիչի առանց տողադարձի գործածության դեպքում ստանում ենք «Գանձ չափոյ, կշոոյ, թոոյ եւ դրամից բոլոր աշխարհի»։ Հենց այս ձեւն է հանդիպում Ռ. Իշխանյանի աշխատություններում:

³² Ռ. Իշխանյան, Հայ գիրքը 1512-1920 թթ., էջ 70:

³³ Գ. Զարբհանալյան, նշվ. աշխ., էջ 124:

³⁴ Գ. Լեւոնյան, նշվ. աշխ., էջ 115:

³⁵ Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սուվալյան, Հայ գիրքը 1512-1800 թթ., Երևան, 1988, էջ 131:

³⁶ Մ. Գրիգորեան, Նոր նիւթեր եւ դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցոց մասին, Վիեննա, 1969, էջ 31:

Գիրքը կազմված է «Առ հայագրուն վաճառասէր եղբայրս» կոչվող առաջաբանից, որին հաջորդում է մի փոքրիկ հատված՝ «Երանելի է ամենայն ազգաց մարդն այն...», երեք գլուխներից՝ ա. «Յաղագս հին կշռոց, չափոց եւ դրամից», բ. «Պատմութիւն եւ խօսք վաճառականութեան», գ. «Յաղագս մղոնաչափութեան»: Այս երրորդ գլխում առկա են տարբեր վերնագրերով բաժիններ, ինչպես՝ «Կարճառօտ պատմութիւն ռաղամի դռներին», «Յաղագս երեքի կանոնին», «Յարդ երեքի կանոնին», «Այլ-եւայլ օրինակ երեքի կանոնին», «Յաղագս վաճառական ընկերութեան»: Երրորդ գլխին հաջորդում է «Յիշատակարան»-ը:

Գրքի անվանաթերթն է. «ԳԱՆՁ ՉԱՓՈՅ՝ ԿՇՌՈՅ՝ ԹԸԻՈՅ՝ ԵՒ ԴՐԱՄԻՑ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՐՀԻ: Որ է գիտութիւն ամենայն տեսակ կշռոց՝ չափոց՝ եւ դրամից. որով բոլոր աշխարհի վաճառականութիւնն վարի: Ժողովեալ եւ ի մի վայր հաւաքեալ աշխատութեամբ Ղուկասու՝ ապաշնորհ Ջահընկալի Վանանդեցոյ: Ծախիւք եւ ի խնդրոյ հայցման Ջուղայեցի Խաչատուրի որդի Պարոն Պետրոսին: Տպիւք եւ հաւանութեամբ]ը եռամեծ Վեհի Թօմայ Վարդապետի. եւ սրբափայլ եպիսկոպոսի Վանանդեցոյ տանն Գողթնեաց: ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1699: Յունուարի 16: ՅԱՄՍՏԷՐԴԱՄ»³⁷: Ինչպես նկատում ենք, անվանաթերթում Ղուկաս Վանանդեցին իրեն անվանում է ապաշնորհ Ջահընկալ (Ջահընկալը եկեղեցական սպասավոր է): Նույն բնութագրումն առկա է նաեւ «Բանալի համատարածի աշխարհացուցին մերոյ նորածնի» աշխատության անվանաթերթին³⁸: Նշենք, որ Ղուկաս Վանանդեցին եղել է ուսյալ անձնավորություն. սովորել է Հռոմի Ուրբանյան վարժարանում: «Բանալի համատարածի աշխարհացուցին» մեջ իր մասին գրում է. «...սերունդս Նուրիջանի, // սնունդս Հոսմայու...»³⁹: Ստեփանոս Ռօշքան նշում է, որ Նուրիջանյան հորեղբորորդիները սովորել են այս վարժարանում, իսկ Ղուկասին ներկայացնում է որպես «...գիտուն եւ գովելի ի վարս իւր»⁴⁰:

Ղուկաս Վանանդեցու մասին Լեոն կարծիք է հայտնում, թե այդքան լավ պատրաստված մի մարդ չէր կարող հայկական դպրոցի սան լինել:

³⁷ Ղ. Վանանդեցի, «Գանձ չափոյ, կշռոյ, թոյ եւ դրամից բոլոր աշխարհի», Ամստերդամ, 1699, անվանաթերթ (այսուհետ՝ բոլոր մնջբերումները բնագրային ուղղագրությամբ կրելվեն այս աղբյուրից):

³⁸ «Բանալի համատարածի աշխարհացուցին», Ամստերդամ, 1696, անվանաթերթ:

³⁹ Անդ, էջ 4:

⁴⁰ Ս. Ռօշքայ, Ժամանակագրութիւն կամ Տարեկանք եկեղեցականք, Վիեննա, 1964, էջ 189-190:

Նրա հայերենի վրա երեւում է Հռոմի ազդեցությունը: Ղուկասը կրթությունը առավել կրոնավոր էր, քան աշխարհական⁴¹:

Ինչպես վկայում է անվանաթերթը, գիրքը կազմել է Ղուկաս Վանանդեցին, իսկ ծախսերը հոգացել է Զուղայեցի Խաչատուրի որդի Պետրոսը: «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ եւ դրամից բոլոր աշխարհին» նախատեսված է հայ վաճառականների համար՝ որպես գործնական տեղեկատու: Միայն կառուցվածքից արդեն իսկ հասկանալի է, որ գրքում քննվում են դրամական, չափի եւ կշռի տարբեր միավորներ, վաճառականության պատմություն, տարբեր իրադարձություններ, տրվում են տեղեկություններ մշտնաջապիության մասին, անդրադարձ է կատարվում նաեւ համարողական արվեստի հետաքրքիր հարցերին: Հ. Միրզոյանը նշում է, որ գրքի հիմքում ընկած է Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով» երկը. դիտարկելով այն փիլիսոփայական տեսանկյունից՝ կարծում է, որ երկն աչքի է ընկնում նաեւ փիլիսոփայական հետաքրքիր հարցադրումներով, քանզի հեղինակը չափի, կշռի, դրամական միավորների, առեւտրի մասին պատմական պատկերացում ունի եւ մտածում է, որ դրանք ժամանակի ընթացքում նույնը չեն մնում, կարող են փոփոխությունների ենթարկվել⁴²: Գրքին անդրադարձել է նաեւ Մ. Գրիգորյանը, ով բարձր է գնահատում երկը՝ նշելով. «Հայ վաճառականներու գործոց դիւրութեան եւ յաջողութեան համար պատրաստուած այս օգտաշատ գրքոյկը ճոխ տեղեկութիւններ կը հայթայթէ զանազան երկիրներու չափերու եւ կշիռներու, արտադրութեանց, մինչեւ իսկ արտածեալ ապրանքներու տրոց շուրջ: Համառօտակի նկարագրուած կան նաեւ ամէն երկրի սովորութիւններն ու լեզուքն. տուեալ են քաղաքաց հեռաւորութիւնները, եւ բացատրուած թուաբանական չորս գործողութիւնները»⁴³:

«Առ հայազուն վաճառասէր եղբայրս» առաջաբանից տեղեկանում ենք գրքի նպատակի մասին՝ այն գրվել է հայ վաճառականներին օգնելու համար: Ղուկաս Վանանդեցին գրում է. «Բայց, ըստ կարի մերում, եւ ըստ որում ի հարազատ գրեանս եղեալ գտինք, զյետ նոցա երթալով՝ զնոյն մեք եւս ի յօգուտ մերազնեայ վաճառասէր եղբարցդ արձանացուցուք» (էջ 3): Գրքի նպատակի մասին նշվում է նաեւ հիշատակարանում. «...ի յօգուտ մերազնեայ բանասէր վաճառական եղբարց, որք սիրեն եւ կամին իմանալ զանազան քաշս՝ դրամս եւ զայլինչ՝ որ վաճառականութեան հետ-

⁴¹ Լեո, Հայկական տպագրություն, Թիֆլիս, հ. Ա., էջ 420-421:

⁴² Հ. Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի պատմություն, էջ 84-85:

⁴³ Մ. Գրիգորեան, նշվ. աշխ., էջ 32:

եւի՝ թէ՛ ի Ֆրանկստան՝ թէ՛ ի Հնդուստան՝ թէ՛ յԱջամաստան եւ թէ՛ Հոռ-մաստան» (էջ 80): Այսպիսով՝ հեղինակն ունեցել է հստակ առաջադրված խնդիր, նպատակ, եւ գրքի տարբեր բաժինները ծառայել են դրանց իրա-գործմանը:

Աշխարհաբարի բնույթը Ժէ. դարի աշխարհաբար տպագիր գրքերում. Հա-յերենագիտության մեջ ընդունված տեսակետներից է, որ հայ նոր գրա-կան լեզվի առաջին գործածությունը Ժէ. դարակեսներից առնչվում էր Նոր Զուղայի տնտեսական առաջընթացի, վաճառականության ծաղկման հետ⁴⁴: Վերջինիս զարգացման ընթացքում ձեւավորվում էր մի ընդհա-նուր խոսակցական հայերեն: Այն օգտագործում էին ոչ միայն տարբեր բարբառակիր հայ վաճառականները, այլեւ տարաբնույթ զբաղմունքի տեր հայերը՝ հաղորդակցվելով օտարության մեջ: Աստիճանաբար այդ ընդհանուր խոսակցականը պիտի նաեւ դառնար գրավոր՝ ենթարկվելով որոշ փոփոխությունների, ներառելով գրաբարյան եւ միջինհայերենյան լեզվական իրողություններ: Նման չղթյալցված երեւույթների արդյուն-քում առաջացավ վաղ շրջանի նոր գրական հայերենը, որն ամբողջապես կայուն չէր, հետեւաբար գրքերում նրա գործածության ժամանակ դեր էր ունենում նաեւ հեղինակի մայրենի բարբառը:

Ժէ. դարի աշխարհաբար տպագիր գրքերն աշխարհաբար առաջին գրքերն էին, որոնց լեզվի քննությանն անդրադարձել ենք մեր այլ աշխա-տանքներում⁴⁵: Դրանցում առկա է վաղ աշխարհաբարի միասնական լեզ-վավիճակ, որում գործածվել են արեւելյան ու արեւմտյան բարբառների բնորոշ լեզվական իրողություններ⁴⁶: Այսպիսով՝ գործ ունենք վաղ աշ-խարհաբարի այնպիսի արտահայտության հետ, որն անվանվում է «միաս-նական»: Ռ. Իշխանյանը «միասնական աշխարհաբարը» բնութագրում է

⁴⁴ Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, էջ 353. նույն հեղինակի՝ «Նոր գրական հայե-րենը XVII-XVIII դարերում», էջ 31-32, «Արեւելահայ բանաստեղծության լեզվի պատմու-թյուն», Երևան, 1978, էջ 30-31:

⁴⁵ Թ. Պողոսյան, «Արիստո համարողութեան» երկը՝ որպէս աշխարհաբար առաջին տպա-գիր գիրք, «Էջմիածին», Թ., 2015, էջ 83-97. Թ. Պողոսյան, Վաղ աշխարհաբարի լեզվա-վիճակը՝ ըստ առաջին աշխարհաբար տպագիր գրքերի, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական V գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2015, էջ 32-46. Т. Погосян, Особенности склонения и некоторых словоформ в первых книгах, напечатанных на новоармянском языке, Материалы международной научной конференции, посвященной 100-летию Южного федерального университета и 90-летию со дня рождения профессора Ю. А. Гвоздарева, Ростов-на-Дону, 2015, էջ 129-133:

⁴⁶ «Գանձ չափոյ, կշոյ, թոյ եւ դրամից բոլոր աշխարհի» գրքի լեզվում առկա են միասնական աշխարհաբարի մի շարք հատկանիշներ, սակայն երկի լեզուն միաժամանակ հակված է դեպի խոսակցական հայերենի արեւելյան հատվածը:

արեւելահայ-արեւմտահայ բաժանման բացակայութեամբ: Գործածվում է նաեւ «միասնական գրական լեզու» անվանումը, որի բնութագրիչն արեւմտյան եւ արեւելյան բարբառների առանձնահատկությունների առկայությունն է, արեւելահայ-արեւմտահայ բաժանման բացակայությունը, արեւելահայ ու արեւմտահայ լեզվատարների հավասարակշռությունը⁴⁷: Կիրառվում է նաեւ «միասնական միջբարբառային լեզու» անվանումը. «... աշխարհաբարի այդ վաղ շրջանում դեռեւս չկային նրա երկու տարբերակները՝ արեւելահայ եւ արեւմտահայ: Դա մի միասնական միջբարբառային լեզու էր, որով տարբեր բովանդակության գրություններ էին գրվում, իսկ 1675 թ. տպագրվեց այդ լեզվով առաջին գիրքը»⁴⁸: Այսպիսով՝ ԺԵ. դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվում աշխարհաբարի բնույթը միասնական է, որն ընդունված է անվանել նաեւ «միասնական գրական լեզու», «միասնական միջբարբառային լեզու»: Մեր կարծիքով բնութագրական կարող է լինել նաեւ «միասնական վաղ աշխարհաբար» բնորոշումը, որով հնարավոր է ավելի լայն պատկերացում կազմել աշխարհաբարի տվյալ փուլի եւ համապատասխան լեզվավիճակի մասին (դրանց հատուկ է արեւելյան եւ արեւմտյան բարբառներին հատուկ իրողությունների՝ առավել կամ պակաս չափով միախառնված լինելը):

Եզրակացություն. Պատմական եւ տնտեսական դժվարին պայմաններից ելնելով՝ հայերի հիմնած տպարանները գործունեություն են ծավալել հայրենիքից հեռու՝ աշխարհի տարբեր քաղաքներում՝ լույս ընծայելով մի շարք երկեր, որոնց թվում են աշխարհաբար առաջին գրքերը:

Հայ տպագրության պատմության մեջ իրենց կարեւոր տեղն ունեն Ոսկանյան, Վանանդեցիների տպարանները, որոնք, կարծես, ի. Կեսարացու դպրոց-համալսարանի ցանած սերմերի հետագա պտուղները լինեին. օրինակ՝ Մ. Ծարեցին, ով մեծ դեր ունի Ոսկանյան տպարանի հիմնադրման գործում, Եվրոպա էր ուղարկվել ի. Կեսարացու դպրոց-համալսարանի աշակերտ Հակոբ Զուղայեցու կողմից, իսկ Մատթեոս Վանանդեցին, որ հետագայում պիտի հիմներ Վանանդեցիների տպարանը, ժամանակին Ոսկանյան տպարանում գրաշար էր եղել: Այսպիսով՝ առկա է մի ներքին կապ, որը ձգվում է Հայ տպագրության պատմության ԺԵ. դարի ընթացքում: Թեեւ Նահապետ Ագուլեցու տանը գործող տպարանը չենք կարող

⁴⁷ Ռ. Իշխանյան, XVII դարի միասնական աշխարհաբարը, ԼՀԳ, 1973, թ. 9, էջ 105. նույն հեղինակի «Նոր գրական հայերենը XVII-XVIII դարերում», էջ 65, 92:

⁴⁸ Ռ. Իշխանյան, Մեր գրական լեզուն երկու դյուղով, «Հայրենիքի ձայն», 1969, թ. 3:

Համեմատել վերը նշված մյուս տպարանների հետ, սակայն այն արժեևորվեց նրանով, որ այնտեղ լույս ընծայվեց աշխարհաբար երկրորդ գիրքը:

ԺԷ. դարի աշխարհաբար տպագիր գրքերի քննությունը ցույց է տալիս, որ դրանք ունեցել են հստակ խնդիր, դրան միտված կառուցվածք, համապատասխան բաժիններ: Գրքերում նշվող նպատակների իրագործմանը հեղինակները փորձում էին հասնել բոլորին հասկանալի լեզվով՝ դառնալով նոր գրական հայերենի վաղ շրջանի ուղղակի տարածողներ:

Վերոհիշյալ երկերը բնութագրվում են վաղ աշխարհաբարի միասնական լեզվավիճակով: Աշխարհաբար տպագիր առաջին գրքերի լեզվի ներկայացման համար գործածվել են «միասնական աշխարհաբար», «միասնական գրական լեզու», «միասնական միջբարբառային լեզու» բնորոշումները: Կարծում ենք՝ բնութագրական է նաև «միասնական վաղ աշխարհաբար» բնորոշումը, որով պատկերացում ենք կազմում աշխարհաբարի տվյալ փուլի բնույթի մասին:

Այսպիսով՝ ԺԷ. դարը դառնում է մի կարեևոր հենակետ ինչպես հայ տպագրություն, այնպես եւ հայոց լեզվի պատմության մեջ:

РЕЗЮМЕ

Данная статья посвящена изучению первых напечатанных на новоармянском языке в 17-ом веке книг - «Ремесло сосчитования» (Марсель, 1675), «Пояснение духовного псалмопевца Давида пророку» (Венеция, 1687), «Сокровища меры, веса, чисел и денег всего мира» (Амстердам, 1699). В статье было исследовано, в каких типографиях и при каких обстоятельствах были напечатаны вышеуказанные книги, какую структуру они имеют, какую цель преследовали, кто является их авторами и как характеризуется ашхарабар в языке этих книг.

В истории армянского книгопечатания важную роль сыграли типография Восканянов (здесь была напечатана книга «Ремесло сосчитования»), типография Ванандских (здесь была напечатана книга «Сокровища меры, веса, чисел и денег всего мира»), между которыми, по нашему мнению, существует внутренняя связь. А типография, действующая в доме Наапета Агулеци, знаменита тем, что здесь была напечатана вторая книга на новоармянском языке - «Пояснение духовного псалмопевца Давида пророку».

В статье было показано, что эти книги преследовали определенную цель, имели особую структуру и соответствующие разделы для достижения этой цели. Авторы использовали для всех понятный язык, становясь прямыми распространителями раннего новоармянского языка. Мы предполагаем, что для языка первых книг, напечатанных на новоармянском языке, характерно определение

“единый ранний ашхарабар”, с помощью которого можно составить представление как о рассматриваемом периоде ашхарабара, так и о сущности этого периода.

SUMMARY

The article presents a study of the first Modern Armenian printed books of the 17th century: “Craft of Numeration” (Marseille, 1675), “Clarification of David Prophet’s Spiritual Psalms” (Venice, 1687). “Treasure of Measure, Weight, Number and Currency of the Whole World” (Amsterdam, 1699). The paper examines in which printing houses and upon which circumstances these books were printed, which structure and goals they have, how the Modern Armenian is characterized in these books.

The printing houses after Voskanyan (“Craft of Numeration” was printed there) and after the Vanandetsys (“Treasure of Measure, Weight, Number and Currency of the Whole World” was printed there) have a great role in the history of the Armenian printing. There is an internal connection between these two publishing houses, from our point of view. The printing house of Nahapet Aguletsi, operating in his own house, is of much importance because the second Modern Armenian book “Clarification of David Prophet’s Spiritual Psalms” was printed there.

It is shown in the paper that the Modern Armenian printed books of the 17th century have a clear-cut aim, structure, corresponding sections. The authors tried to reach the aims mentioned in the books by a language that everyone could understand, thus becoming the disseminators of the Early Modern Armenian language. From our point of view, the language of these books can be defined as “Early United Modern Armenian”, which gives us insight into the period of Modern Armenian and its essence.

